ԿԴ.

Երուսաղեմի Ս. Յակոբայ կնճռոտ խնդրով կը զբաղի դարձեալ Հ. Պօղոս վարդապետ, տալով նոր մանրամասնութիւններ։

Մի և նոյն նիւթին շուրջ կը գտնենք հակիրճ ծանօթութիւն մ'ալ Թովմաս վ. Սերաստացւոյ մէկ անտիպ թուղթին մէջ (1735 դեկտ. 25). « *Յունաց ազգն — կ'ըսէ « նա — մեծաւ հանդիսիւ էել յատեան թագաւորին տաճկաց առ ի խնդրել զսուրբ « յակոբն երուսաղեմի, թէ իւր եղեալ իցէր ի վաղուց ժամանակաց ի ձեռն հնագունի « եղելոյ հէտտիշէրիֆի. և է Բ ոք վասն այսորիկ ի նեղն եկեալ դիմեցին առ դեսպանն սպիտակ լաթին զի օգնիցէ նոցա. այլ նա արտաքսեալ յերեսաց իւրոց « ասաց. Այժմ պիտոյ եղէ ձեզ որք յառաջագոյն եպերեցիք զխրատս իմ* » (Գր. 1735, *դեկտ.* 25)։

Գերյարգելոյ տեառն տեառն Միխիթարայ Աբբայի Հօր մերոյ

Ցիսուսաւանդ ողջունիւ և բազմաւ յարգութեամբ յայտ լիցի, զի նախ քան զայս գիրս գրեցի զբանէ երուսաղէմայ ըստ որում լուայ յայնժամ, բայց այժմ այլապէս եղև բանն, քան[զի] յոյնք 500 քսակ տուեալք են մատնուոյն, նաև խորհրդով նորա իբրև 4000 յոյնք գնացեալք արգուհալ տուեալք են թագաւորին. և զամենայն գրունս մեծաւորաց ի կողմն իւրեանց դարձուցեալք են, և հայոց զամենայն կողմն ի ծով դարձուցեալք են. այլ և զսեղբոսն և նորա զեղբայրն ի բանտ արկեալ է մատնին, որպէս զի մի նոքա ի գրունս դատաւորաց գնալով աւերիցեն զբանն յունաց, և ևս մատնին ի ձեռաց հայոց առեալ ի յինքն պահեալ է զայն հաթտիշերիֆն, զոր առեալք էին ի յայս թագաւորէն ի ժամանակի փոխեցեալ մատնուոյն ձեռամբ սեղբոսին, և ասեն թէ անհնարին է յոյք թէ յոյ[ն]քն չառնուցուն ի ձեռաց հայոց զայն հապէշին տեղն, զորոյ հայքն հաթտի չէրիֆ ի յանցեալ ամի առին յայսմանէ թագաւորէ։ Եւ հայքն մինչ անկան յայսմիկ նեղութեան՝ դիմեցին առ դեսպանն ֆրանգզզու, և նա ոչ կանկնեցաւ նոցա տէր։ Եւ երևի, թէ ի յերկուց կողմանց ևս բազումք և բազումք քսակք մտանեն ի գանձարան անհաւատից։...

Նուաստագունեղ ծառայ

ս. տ. տ. Հ. Պօղոս Վարդապետ

յամի տեառն 1735 *և դեկ.* 23

[*Կ. Պոլիս*]

ԿԵ.

Կարևորագոյն վաւերագրերու մէջ դասելի անտիպ թուղթ մ'է որ կը ներկայանայ հետևեալը։ Ո՛չ մէկ տեղ յիշատակութիւն չկրցանք գտնել այդ հայ կուսանին, այսինքն « Լզիզ Մարիամու քաղաքաւ Էնկուրկցւոյ » և անոր կենսագրութեան մասին։ Անտեղեակ կը թուին հրատարակուած կենսագրութիւններ սուրբերու և այլ երևելի անձանց. բառ մ'իսկ չենք գտներ Հ. Ալիշանի գործոց մէջն ալ։

Հետաքրքրաշարժ թուղթիս ճակատը գրուած է. « Ի ձեռն տեառն մերոյ ամենապատիւ Միխիթարայ աբբայի ձօնեսցի աստուծոյ ». մեզ կը թուի որ գրուած է ան՝ Եկեղեցական Բարձրագոյն Իշխանութեան ներկայացնելու համար։